**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

20.05.2021թ.
ժամը 12[15]

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության 1-ին բաժնի պետ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության գլխավոր մասնագետ Ն. Չախալյան,
ՀՀ ԶՈՒ ԳՇ Ս և Չ Ծ պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Սուքյան,
ՀՀ ԶՈՒ ԳՇ Ս և Չ Ծ ավագ սպա, փոխգնդապետ Ն. Սահակյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի ավագ մասնագետ Ս.Եսոյան:

***«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ս. Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ս. Եսոյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Ալֆա-Էռալոն» ՍՊԸ |
| 2 | «Էներջի Գրուպ» ՍՊԸ |
| 3 | «Ջի-Էս-Սի» ՍՊԸ |
| 4 | «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ |
| 5 | «Միկրորինգ» ՍՊԸ |
| 6 | «ՕԼԷԴ» ՍՊԸ |
| 7 | «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ |
| 8 | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ս. Եսոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Բոլոր Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Միկրոռինգ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝

«Միկրոռինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում Ընթացակարգի ծածկագիրը սխալ է գրված՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրի փոխարեն գրած է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/3»:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 20.05.2021թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: 24.05.2021թ. շարունակելով նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

### 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 8 մասնակիցներ.

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21/16/1

*ՀՀ դրամ*

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | չ/մ | Քանակը | Նախահաշվ. գումարը | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումները | գնային առաջարկները | | | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհանուր գինը | |
| 1 | էլեկտրական պարամետրերի չափման գործիքներ/ Հարմոնիկայի գործակցի չափիչ | հատ | 1 | 6000000 | «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ | 4750000 | 950000 | 5700000 | «Միկրոռինգ» ՍՊԸ |
| | | | | | «Էներջի Գրուպ» ՍՊԸ | 4850000 | 970000 | 5820000 | |
| | | | | | «Ջի-Էս-Սի» ՍՊԸ | 4699500 | 939900 | 5639400 | |
| | | | | | «ԳԼԱՎՄՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ | 4539167 | 907833 | 5447000 | |
| | | | | | «Միկրոռինգ» ՍՊԸ | 4345750 | 869150 | 5214900 | |
| | | | | | «ՕԼԷԴ» ՍՊԸ | 4374000 | 874800 | 5248800 | |
| | | | | | «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ | 4480000 | 896000 | 5376000 | |
| | | | | | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ | 4699000 | 939800 | 5638800 | |
| 2 | չափիչ քանոն, շինարարական/ Չափանմուշային ձողակարկին, 1600 մմ | հատ | 1 | 540 000 | | 0 | 0 | | Առաջարկի բացակայություն |
| 3 | չափման և հսկողության սարքեր/ Չափանոթ 2-րդ դասի, 2000 լ, շարժական, տեղադրված հատուկ սայլի վրա | հատ | 1 | 6 200 000 | | 0 | 0 | | Առաջարկի բացակայություն |
| 4 | Օսցիլոգրաֆներ/ | հատ | 4 | 1 060 000 | «Էներջի Գրուպ» ՍՊԸ | 1300000 | 260000 | 1560000 | «Միկրոռինգ» ՍՊԸ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Օսցիլոգրաֆ 50 ՄՀց | | | | «Միկրորինգ» ՍՊԸ | 880000 | 176000 | 1056000 | |
| | | | | | «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ | 1080000 | 216000 | 1296000 | |
| 5 | չափման և հսկողության սարքեր/ 0,15 ճշտությամբ հեղուկի հաշվիչ (էլեկտրոնային տվիչով) բարձր թողունակությամբ | հատ | 1 | 1 200 000 | «Էներջի Գրուպ» ՍՊԸ | 1150000 | 230000 | 1380000 | Բանակցություն |
| 6 | չափման և հսկողության սարքեր/ Դիզվառելիքի լցավորման (մղման) կայանք | հատ | 1 | 4 200 000 | | 0 | 0 | | Առաջարկի բացակայություն |

3.2 Գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով ընթացակարգի 5-րդ չափաբաժնին հայտ է ներկայացրել մեկ մասնակից և առաջարկված գինը գերազանցում է պլանավորված նախահաշվային գինը, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները 24.05.2021թ. որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 27.05.2021թ. ժամը 11:30-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Նախատեսված բանակցություններին «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն չներկայացավ և արդյունքում գները մնացին անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Ս. Եսոյան)

4.1 04.06.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Միկրորինգ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.3 Քանի որ ներկայացված գինը 5-րդ չափաբաժնի մասով գերազանցում է գնումն իրականացնելու համար նախատեսված նախահաշվային գինը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին), իսկ 2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը (ոչ մի հայտ չի ներկայացվել), գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը վերը նշված չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ**

(Ս. Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-16/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Տ. Մաթևոսյան

Գնահատող Ն. Չախալյան

Գնահատող Խ. Սուքյան

Գնահատող Ն. Սահակյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան